սի, պիտի ընդունել Զրուանից աշխարհում, ինչպէս և Դերբէնդը կամ ձորայ դուռը իւր շրջակայներով, որի սահմաններն են արեւելքից՝ Կասպից ծովը, արեւմուտքից՝ Կովկասեան լեռան դէպի հիւսիս ձգուող ճիւղը (ներկայումս Քիւրա-տաղլարը), հիւսիսում ձեղայքը, հարաւում Կազբքը, սահման ունենալով պատմական Ալբանոս գետը (ներկայումս Սամուր-չայն)։

«Իսկ ինչ վերաբերում է նրան, թէ անպատճառ այնտեղ է նահատակուել սուրբ Գրիգորիսը, դրան ճշդում է ժողովրդական հին աւանդութիւնը։ Նոյն իսկ ներկայումս կան ծերունի թուրքեր, որոնք լսելով իրենց պապերից և սրանք էլ երեւի նախնի հայերից, ասում են որ «Այդ փիրը (սուրբը) եղել է մի մեծ խալիֆայ, որ մարգարէի նման քարոզել է ժողովրդին ճշմարիտ հաւատ և մաքրութիւն, ժողովուրդը չէ կամեցել թողնել իւր անառակութիւնը, աւազակութիւնը, հակառակել է նրան և ձիու պոչից կապելով քաշքշել է այս ու այն կողմը և սպանել։

«Հետեւապէս երբ պատմութեան ասածը գրեթէ հարազատաբար պահպանուել է իբրեւ աւանդութիւն բնական է, որ այդ տեղ պիտի լինի Գրիգորիսի նահատակութեան տեղը, և այս դաշտն էլ, որ փռուած է մատուռի հիւսիսային կողմը, պիտի լինի պատմական Վատնեան դաշտը, ինչպէս ասացինք արդէն։

«Առաւօտեան 10 ժամին բանալով յիշեալ մատուռի դուռը, Տէր հայրը վառեց սեղանի մոմերը և սկսեց մաղթանք կատարել։ Առաջին անգամն էր, որ այդ հինաւուրց մատուռի մէջ ժամասացութիւն եղաւ[1])։ Այդ մատուռի մէջ տարէնը մի երկու անգամ, սուրբ Գրիգորիսի և Աստուածածնի վերափոխման տօներին պատարագ է մատուցանում։ Այդ պատարագներին ներկայ են լինում Դերբէնտի բարեպաշտ Հայ ուխտաւորները։ Ճաշուան ժամից և մաղթանքից յետոյ զոհաբերութիւն արինք և ճաշելուց յետոյ ճանապարհ ընկանք դէպի քաղաք։ Այդ օրը

---

[1])1889 թուին հոկտ. գնալով Մօլլա Խալիլ, մենք եւս ժամերգութիւն կատարեցինք սուրբ Գրիգորիսի մատուռի մէջ Մ. Ե. Ս։